Զ.

Մանկան հոգին դո՛ւ կ’առնես, լուք Գըրօղն եղեր մահանայ.
Զալում ես քեզի՛ կ’ասեմ, քո հօրըն տընակն երերայ.
Խա՛ժ աչք, ես ըզքե՛զ սիրեմ, թող ալամս ամէնն իմանայ.
Թող զիս ի վըրադ մորթեմ, հէնց հաշուեմ թէ օր մի չեղայ:

Է.

Գիշերս ես ի դուրս ելայ, ղարայկօզ ու բարակ լուսունկայ.
Կօզալ մ’այլ ի դէմս ելաւ, քըրտընած ու բաղնելըւայ.
Երի թէ առնեմ պագնեմ, նա բոլորն երթար ղալապայ.
Պէչան այլ ի վեր իկալ, թուփ ունօքն արաւ թէ՝ Գընա՛,
Գընա՛ ’ւ իրիկունն եկո՛, հաւն ի քուն, որ մարդ չիմանայ:

Ը.

Գիշերս ես ի դուրս ելայ. մութ գիշեր, չիկայ լուսունկայ.
Բըռնամ այս բարակ ճամբեկս ու երթամ մինչ որ լուսանայ,
Շատ գեղ շատ քաղաք անցայ, այս գեղիս դէմըն կապեցայ.
Թող շէն ու բոլոր մընայ, թ’ ի՞նչ աղէկ կօզալ կու կենայ:

Թ.

Զմարչըն սիրու տէր կ’անեն ու կուտան ճամփան թէ՝ Գընա՛,
Հաց մի պաշարիկ կուտան, ո՛չ երկու պագիկ նըւաղայ:

Ժ.

Գիշերս ես ի դուրս ելայ, ի վերի թաղըն նայեցայ:
Չարտախ մ’ապիկի տեսայ, իմ եարիկն ի հոն կու խաղայ:
Չգիտեմ թէ սիրե՞մ ըզնա, թէ թողում որ այլ մեծանայ:
Երթամ ու հեռուկ կանգնիմ ու պահեմ զաչերս ի վերայ:
Մէկ մ’այլ գայ թէ՝ «Տէր կանգնիմ», նա թափեմ զարիւնս ի վերայ:

ԺԱ.

Գիշերս ես ի դուրս ելայ, թուխ ամպ էր ’ւ անուշ կու ցօղայ.
Ղարիպ սիրու տէր մանուկս դըռնէ դուռ անկեր կու դողայ.
Հարսնուկ մ’Աստուծոյ սիրուն զիր կողպած դուռըն կու բանայ.
«Եկո՛ զքեզ ի ծոցս առնում մինչեւ որ ոըրտիկս հովանայ:
Արի՛ ու հընցկուն գընա՛ որ ծոցուս տէրըն չիմանայ:
Մահիկըդ դանկով կ’առնէ, արիւնովդ ըզձեռն լըւանայ»: